ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«20» 10 2022թ.
No 006511

**«ՄԵԳԱՏՈՐԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ**
(Հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, Շենավան, 14փ., 1 շին.)

Հարգելի՛ պարոն Մելքոնյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2022 թվականի հոկտեմբերի 18-ի «Թիվ ՀԳ-00211/22 վարույթը կասեցնելու մասին» թիվ 391-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք նաև, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչություն
Կապարող՝ Տաթևիկ Հովհաննիսյան
Հեռ. (+374 60) 830-840 (235)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 391-Ա

ԹԻՎ ՀԳ-00211/22 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 18-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-00211/22 վարույթը կասեցնելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության (այսուհետ նաև՝ **Դատախազություն**) կողմից 2022 թվականի ապրիլի 5-ին Հանձնաժողով է ներկայացվել տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտումների վերաբերյալ հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**):

Հաղորդմամբ Դատախազությունը հայտնել է, որ Ռուսաստանի Դաշնության դատախազության հարավային զինվորական օկրուգի զինվորական դատախազության թիվ 312 կայազորի (այսուհետ նաև՝ **Թիվ 312 կայազոր**) զինվորական դատախազը իրականացնում է ստուգումներ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության (այսուհետ նաև՝ **Վարչություն**) պաշտոնատար անձանց կողմից պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների ոլորտում օրենսդրության պահանջների պահպանման բնագավառում:

Հաղորդմանը կից Դատախազությունը ներկայացրել է Թիվ 312 զինվորական կայազորի դատախազի գրությունը, որով վերջինս հայտնել է, որ «Մեգատորգ», «Յագո», «Զաքար Պրոդուկտ», «Ոսկե Արծիվ», «Սելխոզ-Ֆուդ», «Ալֆա Էդ», «Սակ Բրադերս», «Արագածի թռչնաբուծական ֆաբրիկա» և «Արմագրո Հոլդինգ» ընկերությունների տեսակարար կշիռը մատակարարումների ընդհանուր ծավալում կարող է վկայել այլ տնտեսավարող սուբյեկտների մրցակցային իրավունքների սահմանափակման, ինչպես նաև հնարավոր հակամրցակցային համաձայնությունների մասին:

Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 3-ին «Մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 177-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-00211/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**)՝ «Մեգատորգ», «Յագո», «Զաքար Պրոդուկտ», «Ոսկե Արծիվ», «Սելխոզ-Ֆուդ», «Ալֆա Էդ», «Սակ Բրադերս», «Արագածի թռչնաբուծական ֆաբրիկա», «Արագած Ֆուդ» և «Արմագրո Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վարքագծում առերևույթ հակամրցակցային համաձայնության և տնտեսական գործունեության համակարգման հատկանիշների առկայության հիմքով:

Վարույթի շրջանակներում գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով, Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 17-ի թիվ ՄՊՀ-001446 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ ՄՊՀ-001446 գրություն**) դիմել է Վարչություն՝ 2019, 2020 և 2021 թվականների ընթացքում պարենային ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից պահանջվել է տեղեկատվություն.

1. Վարչության կողմից հայտարարված գնման ընթացակարգերի փաստաթղթերի փաթեթների (պատասխանատու ստորաբաժանման զեկուցագրեր, գնումների համակարգողի կողմից տրված եզրակացություններ, գնման ընթացակարգերի հայտարարություններ և հրավերներ, գնման հայտեր, արձանագրություններ, մասնակիցների գնային առաջարկներ, ներքին գրություններ, հրամաններ, հանձնման-ընդունման արձանագրություններ, ակտեր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր) վերաբերյալ.
2. Գնման ընթացակարգերի հայտարարություններ և հրավերներ ստացած մասնակիցների ընտրության սկզբունքների վերաբերյալ.
3. Գնման ընթացակարգերի հայտարարությունների և հրավերների հրապարակման վերաբերյալ՝ նշելով, թե գնման ընթացակարգերի հնարավոր մասնակիցները ինչ տարբերակով են ծանուցվել ընթացակարգերի մասին:

Վարչությունը 2022 թվականի մայիսի 23-ի դրությամբ ստացել է թիվ ՄՊՀ-001446 գրությունը, սակայն սույն որոշումն ընդունելու պահի դրությամբ տեղեկատվություն Հանձնաժողով չի ներկայացրել:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 65-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը կարող է կասեցվել, եթե չեն ներկայացվել պահանջված փաստաթղթերը, նյութերը կամ այլ տեղեկատվություն կամ ներկայացվել են ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ:

Այսինքն՝ Հանձնաժողովն ունի իրավասություն կասեցնելու իր կողմից իրականացվող վարույթը, եթե չեն ներկայացվել պահանջված փաստաթղթերը, նյութերը կամ այլ տեղեկատվություն:

Տվյալ դեպքում՝ թիվ ՀԳ-00211/22 վարույթի իրականացման հնարավորությունը կախված է Հանձնաժողովի կողմից թիվ ՄՊՀ-001446 գրությամբ պահանջված տեղեկատվության ներկայացումից, հետևաբար ծագել է մինչև համապատասխան

փաստաթղթերի, նյութերի կամ այլ տեղեկատվության ներկայացումը վարույթը կասեցնելու անհրաժեշտություն:

Վերոնշյալ համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունման անհնարինությանը:

Այս կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ «վարչական ակտի ընդունման անհնարինություն» եզրույթը ենթադրում է ոչ թե վարչական ակտի ընդունման գործնական հնարավորության բացակայություն, այլ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջների պահպանմամբ վարչական ակտի ընդունման իրավական խոչընդոտների առկայություն: Մասնավորապես, վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունման անհնարինությունը ենթադրում է Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթի իրականացման և Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվության այնպիսի փոխկապվածություն, որի առկայության պայմաններում Հանձնաժողովի կողմից վարույթի իրականացումը հնարավոր չէ մինչև դրա ներկայացումը:

Տվյալ դեպքում՝ թիվ ՀԳ-00211/22 վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացում ապահովելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ կարող են պարզվել թիվ ՄՊՀ-001446 գրությամբ Վարչությունից պահանջված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում: Այսինքն՝ թիվ ՀԳ-00211/22 վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ իրականացում հնարավոր չէ մինչև Վարչության կողմից թիվ ՄՊՀ-001446 գրությամբ պահանջված տեղեկատվության տրամադրումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 65-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կասեցնել թիվ ՀԳ-00211/22 վարույթը մինչև Վարչության կողմից թիվ ՄՊՀ-001446 գրությամբ պահանջված տեղեկատվության տրամադրումը:

2" Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հոկտեմբերի 18
Երևան